

ցած ըլլան ատոնք արդի յառաջդիմութիւններու բաղդատմամբ, դեռ անոնք մեծ արժէք մ'ունին, անոնք իրենց մէջ կը ներկայացընեն հմտութիւն, անխոնջ աշխատութիւն, առնական ոգի, կորով, ինքնաճանաչութիւն, պատասխանատուութիւն, կեանք, վերջապէս Դպրոց մը, որ պարտքը կատարած է եւ ասոնց ետին, Նկարագրի Մարդը:

* * *

Ահա դէմք մը, որ 26 տարի շարունակ իր կոչման, իր գործին նուիրում՝ հիանալի ճարտարութեամբ մը կը յեղաշջէ Պոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքութիւններու ծակատագիրը: Այն երկու աթոռները՝ մեծ, շատ մեծ բան կը պարտին կողոտին եւ Շղթայակրին:

Ահա դէմք մը, որ նախապաշարումները, հակակրօթիւնները կոխկռտելով, դիմած է իր նպատակին եւ օր մը յոգնութիւն չէ զգացած:

Ահա դէմք մը, որ իր բոլոր փառասիրութիւնը, իր բոլոր գործունէութիւնը անկեղծ աշխատութեան մը վրայ հիմնած է: Եւ այն աշխատութիւնն է որ բարեկարգեց պատրիարքութիւնները, բարեզարգեց Եկեղեցիները, կազմեց իր գպրոցը:

Բարքերու ապականութենէն յառաջ եկած այն մեծ հրդեհը, որ էրած տոշորած էր եկեղեցական եւ կրօնական վերակենդանութեան վրայ սաւառնող ամէնէն ազնիւ յոյսերը եւ կը սպառնար բուն գեղեցիկ շէնքն ալ լափլիզել, Այլոտն է որ Բաբելոնի հնոցին մէջ զոլութիւն սփռող հրեշտակի պէս կը մտնէ բոցերուն մէջ անխռով եւ իր տեւական եւ տոկուն գործունէութեամբ կը կնքէ իր կոչումն ու պաշտօնը:

2էք տեսներ այս դէմքին մէջ Նկարագրի Մարդը, որ յառաջունէ շատ լաւ ճանչցած էր իր ըղձալին, իր յարացոյցը, եւ ասոր համար էր որ